

ՆՈՐԱՀԱՅՏ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Զոհրապի եղերական մահից տարիներ անց հայտնի դարձավ, որ նա Փարիզում 1913-ին հրատարակել է ֆրանսերեն երկու աշխատություն, որոնք անմիջականորեն առնչվում են նրա բաղաժանան ղործունեությանը, Դրանցից առաջինը նախել էնա՛ր ստորագրությամբ «Հայկական հարցը դավաճանների լույսի տակ» գրքույկն է, որ բավականաչափ ծանոթ է հետազոտողներին։ Արկրորդը «Կուր լե պուպլը դ'Սրիանա» (Վերելիքի սողովուրդների համաքնն) երկշարքայա պարբերականում տպագրված «Սերաստիայի նահանգը տնտեսական ու ազգագրական տեսակետից և հայերի դրությունը» անստորագիր ուսումնասիրությունն է, որ գիտական շրջանառության մեջ գրվեց վերջերս¹։

1970-ական թվականների կեսերին պարզվեց, որ 1912—1915 թթ. Զոհրապը կատարել է օրագրական բազմաթիվ գրառումներ ու նշումներ, որոնք թեև չի նախատեսել տպագրության համար, բայց դրանք նույնպես ամբողջովին ֆաղափարված չեն։ Նրանցից մեկը կոչվում է «Հայկական վերահայրենի աշխատությունների առաջադիր խնդիրներին»։ Մեծ նահատակի այդ սուղ-խառններից պահպանվել են 69-ը, որոնցից 58-ն արդեն հրապարակվել են²։ Այս անգամ քննարկենք ներկայացնում մնացյալ 11 գրառումները։ Ժամանակին որոշակիորեն ուղեկցող հոգիածներում փորձել ենք ընդհանուր գծերով ցույց տալ ղոհրապի գրառումների պատճառագրական նշանակությունը և հենիքս լուսաբանել բազմադրամական և առարկայի խնդիրները, ապա ներկա պարագայում դրանց վերաբերվումը նպատակամար լի Բայց մի քանի նկատումներ, այդուհանդերձ, անհրաժեշտ են։

Օրագրություններում արձանագրված են 1912-ի դեկտեմբերի 9-ից մինչև 1915-ի մայիսի 9-ը ընկած ժամանակահատվածի աֆ իրողությունները, որոնք կապված են Հայկական բարենորոգումների և Առաջին համաշխարհային պատերազմի հետ։ Պատմաբաններին վերապահելով գրառումների համակողմանի քննությունն ու արժեքումը, ուղղում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքների վրա։

Նախ, օրագրությունները պարունակում են արտակարգ հարուստ վաստական նոր նյութ։ Այս պարագան կարևորում ենք, քանի որ բարենորոգումների շուրջ իթթհատի պարագույն-ներին, որոնք դիվանագետների հետ Զոհրապի վարած պաշտոնական ու ոչ պաշտոնական բանակցություններին, ունեցած հանդիպումներին, զանազան նիստերին ու խորհրդակցություններին, հայ բաղաժանան կուսակցությունների ու խմբակցությունների տարախոհությունների, պատերազմի ամիսներին թուրք-գերմանական, թուրք-ռուսական հարաբերությունների և բազում-բազում այլ անցքերի վերաբերյալ հաղորդված տեղեկություններն ու մանրամասները կամ ընե արտացոլված պատմագիտական գրականության մեջ, կամ, լավագույն դեպքում, հիշատակված են հպանցիկ։

Ապա, անտարակուսելի է, որ Զոհրապի վկայաբերումները վստահելի են ու հավասար, քանի որ օրագրողը պուսահայ այն ամենաազդեցիկ քաղաքական գործիչն էր, որին ճանաչում էին ոչ միայն որպես «Պատրիարքարանի կիսապաշտոնական բերան», որ պատրաստում էր Բ. Դոանն ու տերություններին մատուցվող «հուշագրեր» և հիշատակագիրներու մեծ մասը³ (Վահան Փափազյան-Կոմս), այլև օսմանյան խորհրդարանի ամենահեղինակավոր քննադատն ու միջազգային համբավ վայելող մի օրենսգետ, որի հետ հավի էին նստում Ամենայն հայոց կաթողիկոսն ու Պողոս Նուպար փաշան, կառավարության ու երիտթուրքերի ղեկավարները, որոն ու եվրոպական դիվանագետները։

1 Կեղծանվան գաղտնիքն առաջինը բացահայտել է Արշակ Զոպանյանը 1990-ին, իսկ աշխատությունը հայերեն թարգմանությամբ տպագրվել է Բելրոթում, նախ «Նախիր» շաբաթաթերթում (1972), ապա առանձին գրքույկով (1973)։

2 Տպագրության փաստը հայտնաբերել և նվարդ վարդանյանի թորգմանությամբ հրատարակել ենք մենք (Բանբեր Երևանի համալսարանի, 1991, թ. 1, էջ 112—126)։

3 Տե՛ս Զոհրապի օրագրությունները Հայկական բարենորոգումների (1912—1914) վերաբերյալ (Պատմա-բանասիրական հանդես, 1990, թ. 4, էջ 202—228), Ահայտ Զոհրապի։ Օրագրություններ (Գարուն, 1991, թ. 4, էջ 90—95, թ. 5, էջ 63—68)։

եւ վերջապես, օրագրութիւններում Զոհրապը ո՛չ կողմնակի դիտորդ է, ո՛չ էլ պարզ արձանագրող: Նա չի բավարարում սոսկական տեղեկատվութեամբ, ալ մեկնարանում ու վերլուծում է փափուկները:

Երբ հաշվի ենք առնում այս ամենը, ապա ամենայն հիմամբ կարող ենք պնդել, որ Զոհրապի գրառումները, որքան էլ թղթին հանձնված լինեն հապճեպ, երբեմն որպէս ուրվագրումներ ու նշումներ, ձեռք են բերում եզակի վավերագրերի արժեք:

Սույն հրապարակումները բաղկացած են երկու մասից՝ բուն գրառումներ և տարբերակներ: Առաջինները, թեև ընդգրկում են ժամանակագրական փոքր հատված՝ 1914-ի հոկտեմբերի 21 (նոյեմբերի 3)-ից մինչև նոյեմբերի 3 (16)-ը, բայց պատկերացում են տալիս պատերազմական իրողութեան, թուրք կառավարական և կուսակցական շրջանակների ներքին խմորումների, հասարակական տրամադրութիւնների վերլուծարարների մասին: Տարբերակները վերաբերում են բացառապէս բարենորոգումների շրջանին: Հարկ է դիտել, որ Զոհրապը, սկսելով օրագրումները, ինչ-ինչ պատճառներով ընդհատել է դրանք և ավելի քան մեկ տարի հետո, 1914-ի դեկտեմբերի վերջերին, վերադարձել նախընթաց իրողութիւններին ու արել հպանցիկ հիշատակումներ՝ ըստ երևութի նպատակ ունենալով երբեք անդրադառնալ: Կարեւորելով այս կամ այն երևույթը, նա միևնույն փաստը արձանագրել է մի քանի անգամ, ինչը և հանգեցրել է տարբերակների ստեղծմանը: Կարծում ենք, որ տարբերակներէի հրապարակումը արդարացիւմ է երկու պատճառով: Նախ՝ ամբողջում է օրագրութիւնների տպագրութիւնը, և ապա՝ դրանք բովանդակում են հավելյալ որոշ մանրամասներ (տարբերակները համապատասխանում են «Պատմա-բանասիրական հանդեսի» 7, 9, 19, 22 և 23-րդ գրառումներին):

Գրառումները հրապարակվում են Ե. Զարենցի անվան գրականութեան և արվեստի թանգարանի Զոհրապի ֆոնդում (№ 17) պահվող ինքնագրերից: Առանձին բառեր, որոնք չենք կարողացել վերծանել, ցիւց են տրվում ա. (անընթեռնելի) նշումով, իսկ ընդգրկող պատրաստող լրացումներն առնված են սուրանկուն փակագծերում:

Ինքնագրերում հանդիպող ֆրանսերեն բառերը մեծ մասամբ վերծանել է ԳԱԹ-ի աշխատակից Արուսյակ Բոյաջյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

Ա. Ս. ՇԱՐՈՒԹԱՆ

1

<ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

<Ա>

<Հոկտ. > 21/3 նոյեմբեր, 1914, Երեւոյն, իրիկուն, ժամը 8
ը. <ստ> Ե. <վրոպացի>¹

Լուր չի կա... բացի Վիեննայի «(3 ա. գերմ.) bureau» և Պերլինի «Wolf bureau»-ին՝ հերյուրած հեռագիրներին:

Առաջինին մասին թուրքերը, որոնք ամենին ծանրակշիռ պարագաներուն մեջ իրենց պատրաստականութիւնը կը պահեն, բառախաղ մը շինած են լրագիրներ, սովորաբար Վիեննայի հեռագրական պալատին, առաջին երկու գիրքը նշանակելով կը բավականան, այնպէս որ այս պալատին անվանի կ'սկսի կըն, կըն: Թուրք գրագետ մը ըսավ ինձի, ականակելով այդ հեռագրական գործակալութիւնը.

— Այս գիտեմ, այդ քաջա պալատին:

Մտահոգութիւնը ընդհանուր է թուրքերուն քով, Հետո ամեն ոք սկսած է համոզվիլ երկու բանի. ա. Որ թուրք կառավարութիւնը գոյութիւն չունի և ամեն բան գերմաններուն ձեռքն անցած է. բ. Որ ուսուց վերագրված հարձակումը և Սև ծովի բերանը ական րենելու պատմութիւնը շինծու է, և դեպքը ուրիշ բան չէ, բայց հանկարծակի և անպարկեշտ հարձակում՝ ուսուց դեմ պատերազմը՝ անխուսափելի դարձնելու համար: Ինչ որ եղավ:

Քանի մը նախարարներ այսօր հրաժարեցան: Վերջիվերջո ուշաբերեցան և զգացին այն ծանր պատասխանատվութիւնը, զոր ստանձնած էին:

Քրիստոնյաները, եվրոպական, արդեն իրական նախարարներ չէին եղած երբեք. իրենց քաղաքական իրավունքները և պատասխանատվությունը չէին ըմբռնած. ոչ ոք իրենց բան մը կը հարցնէր, և սակայն ամեն թուղթի և նախարարական որոշումի տակ իրենց ստորագրութիւնը կար: Այս ծիծաղելի դիրքը ողբերգական դարձավ այլևս, և այս պարոնները քաշվեցան, իրենց հետ են Մահմուտ փաշա և Ճավիտ պեյ⁸: Սատրագամը՝ volte-face⁸ ըրավ և կեցավ. նկարագրեց զուրկ է այս մարդը. նախարարացեալի դիրքի հրապույրը անդիմադրելի է: Սայիտ փաշա Քյուչուք⁸, Հագդի փաշա¹⁰ արդեն փառքին համար բոլոր իրենց համոզման և խղճին հակառակ գործեր կատարեցին: Թուրքիո մեջ պատասխանատվութեան գոյութիւն չունենալն ալ այսպէս շարժելու անպատեհութիւն չի ծագեր: Երբոր օր մը նախարարացեալի մը կամ նախարարի մը գլուխը իյնա, այն օրը միայն (1ա.) նախարարի մը պատասխանատվութեան ի՞նչ ըսել լըլալը պիտի հասկցվի: Այդ օրը չի պիտի գա, վախճամ:

Վերջին ժամուն լուր ելավ թե անգլիական նավատորմը Տարտաննիլը կը ոմբակոծէ, թե անգլիական նավ մը, ոմանք կ'ըսեն «Կամբեթթան», ընկըղմած են: Ոչինչ կա ստույգ:

Այդ գիշեր ճաշեն վերջը Ճավիտ պեյին պիտի երթամ: Տեսնենք, ան ալ պիտի դառնա՞ իր որոշումն:

<Ք>

<Հոկտ. > 21/3 Նոյեմբեր, 1914, երեքշաբթի, կես գիշեր

Հիմա Ճ. <Ճավիտ> պեյին կը վերադառնամ. մտերմական խոսակցութիւն մը, որ խիստ շահեկան կարգ մը հայտնութիւններ բերավ մեզի:

Նախ իր հրաժարականին մասին խոսեցանք: Ես approuver¹¹ ըրի իր ընկացքը: Ամեն այցելունները (որոնց մեջ Հալաճյան¹² և Վարդգես¹³) հակառակ կարծիք հայտնեցին. ըսեցին որ թեև սկզբամբ, հակառակ պատերազմի գաղափարին, պետք էր կատարված իրողութեան առջև մնար դահլիճի մեջ, իր ազգասիրութենէն չի զրկեր զայն և ավելցներ հաջողութեան շանսերը¹⁴, որ պզտիկ չափով որ ըլլա:

Ես պարզեցի իմ միտքս. թե որ կատարյալ իրողութիւններու առջև գտնվելն պարտադրեց, հակառակ գաղափարն եղողները իրենց համոզման հակառակին նվիրվելու՝ ատիկա դրդիչ պատճառ պիտի ըլլա, որպէսզի ամեն ոք իր կարծիքն շեղողը fait accompli-ի¹⁵ մը առջև դնեն: Ավելցուցի որ ներկա պարագան, որ եթե ոչ Թուրքիո բոլորովին անհետացան, գոնե Պոլսո ձեռքն ելլելուն և ամենամեծ չափով այս տերութեան սահմաններուն նվազելուն պես հետեանքներ պիտի ունենա: Ասոր պատճառ եղող նախարարները ոչ միայն պատմութեան առջև, այլ ավելի մերձավոր պատասխանատվութիւններու պիտի ենթարկեն: Հետո, որքան ալ մեծ ըլլա աղետը Թուրքիո համար, դարձյալ այս պետութեան մնացորդ շահերը կարելիութեան սահմանին մեջ պաշտպանելու համար մտքի, գրչի և լեզվի տեր մարդոց պետք պիտի ըլլա: Ճ. <Ճավիտ> պեյ քաշվելովը այժմէն կրնա ճիշդ այդ պարագային ծառայել իր երկրին, և պզտիկ գործ մը չէ ատիկա: Եւ ասիկա այժմէն խորհիւք պարագա մըն է, որ խոհեմութիւնը չի ներեր, որ անտեսվի: Ասոր դեմ թալաթ պեյ¹⁶ և իր առաքյալները ըսեցին, որ ներկա պատերազմը՝ «Tout ou rien»-ի¹⁷ պատերազմն է: Թուրքիա իբրեւ իսլամական կայսրութեան կազմութեան կամ բոլորովին բնաջինջ ըլլալուն մեջ միջին բան չի կա: Այս երկու ծայրահեղ լուծումներն ալ ըստ իս ճիշդ չեն: Ձախողանքը գրեթե ստույգ ըլլալով հանդերձ, անոր հետեանքը պիտի ըլլա Թուրքիան 4—5 թուրքաբնակ վիլայեթներու մեջ ամփոփել, ինչ որ բնական և քիչ մըն ալ բանավոր կարգադրութիւն մը պիտի ըլլար միջազգային իրավագիտութեանց սկզբմանց համեմատ: Թերեւս ունէ՞ ձեռով մը Կ. Պոլիսն ալ անոր կցել կարելի ըլլա (քիչ հավանական): Ծիշդ այդ ձեռք բերելու համար պետական մարդիկ պետք են

որ brule¹⁸ եղած շրջան, ձ. <ավիտ> պեյ հրաժարական տալովը հիմա, այդ հավանական ծանր գործին աշխատելու հավանականությունը կ'ունենա, Թիերի օրինակն 1870—71ին¹⁹ ըսածս կը հաստատե: Այս ըսածս այնքան ստույգ է, որ եթե ձ. <ավիտ> պեյ իրապես պատերազմի հակառակ շրջար և հրաժարական ներկայացուցած չի գտնվեր, պետք էր (մովաշվայով)²⁰ բաժնվեր այն cabinet⁶ պետական մարդոց պահեստին մեջ սպասելու համար:

ձ. <ավիտ> պեյ ինձի հետ բոլորովին համամիտ ըլլալը հայտնեց:

<Գ>

<Հոկտ. > 21/3 նոյեմ., երեքշաբթի, կես գիշեր

Գործերը մինչև հոս եկած-անցած իրողությունց վրա ձ. <ավիտ> պեյ հետևյալ գաղափարները հայտնեց.

Պատերազմի ամենեն մեծ կուսակիցը Թալաթ պեյն է: Անիկա համիս-լամական միացյալ, զորավոր և համաշխարհային պետություն մը կազմելու գաղափարն հրապարկած է, և ոչինչ կարելի չէ զայն հտ դարձնել իր այս համոզումեն: Ան կարող է թե՛ Comité²¹, թե՛ դա՛հլիճը հեռու պահել պատերազմեն: Ոչ միայն այդպես չի շարժեցավ, այլ իր ույժը հակառակին գործածեց: Մեծամասնությունը խաղաղության կուսակից ըլլալը տեսնելով, դեպքերուն ձգեց երկիրը դեպի պատերազմ մղելու պաշտոնը և դեպքերուն այս տեսակետին հուսադրող ընթացք մը տվավ: Ես ամեն մեկ այդ կողմ հակելուն բողոքեցի, վտանգը մատնանշեցի և հայտնեցի որ որոշած էի հրաժարիլ՝ եթե պատերազմ հառաջ գա: Այնպես <որ> ոչ ոք կրնա և իրավունք ունի այսօրվան հրաժարականս քննադատելու: Առաջին վայրկյանին չի հրաժարեցա միմիայն այն պատճառով, որ հավաստիք տվին ինձի ընկերներս, թե իրենք ալ պատերազմի հակառակ են: Այսպես, «Կյոպենհին» իբրև թե գըն-վելուն²², գերման զորքը հոն մնալուն, Սև ծով ռազմափորձեր կատարելուն ընդդիմացա բոլոր ույժովս և ըսի որ այս ամենը պատերազմ ծագել տալու միայն կը ծառային: «Կյոպենհին» Սև ծով ելլելու մասին ըսի, որ հոն անիկա պիտի հետևի Պիերինեն անթեյ հեռագրով ստացած հրահանգին, քան թե մեր պատվերներուն: Ինձի ըսին որ ծովակալ Սյուշուն²³ իր պատվո խոսքը տված է պատերազմը շընելու: Ըսի որ իր հայրենիքին ծառայելու պարտականություն ու ավելի հզոր է, քան թե պատվո խոսքը: Իմ նախատեսությունս ճշմարիտ եղավ:

Թալաթ պեյի և իր կարծիքին եղող պատերազմասերներուն հոգեբանությունը մեկ մանրերկրորդի մեջ չի կազմվեցավ, այլ քիչ քիչ, հետզհետե ծնավ և զորացավ հետևյալ պարագաներով.

Նախ՝ այն ընդհ. <անուր> համոզումը թե Գերմանիա իր հակառակորդները ոչ թե պիտի հաղթեն, այլ զանոնք պիտի ջախջախեն 1870ի եղածեն²⁴ շատ ավելի արագ և ահագնեցիկ կերպով: Եվ բնական փափաքը հաղթողին, բան թե հաղթվողին կողմը առաջուց տեղ բռնելն է: Այս համոզումն ալ մեկ մանրերկրորդի մեջ չի կազմվեցավ, այլ հետզհետե: Ասոր ծառայեցին նախ՝ մեր զինվորականներուն և մեզի տված միահաղույն հավաստիքը: Երկրորդ՝ գերմանացվոց լիեծը, նամյուռը, Մոպիեծը²⁵, որոշված և առաջուց հայտնը-ված թվականներուն գրեթե մաթեմատիքական ճշդութենին (1 ա. տեղանուն) և Մոնսի հաղթություն²⁶ և մինչև (2 ա. տեղանուն) իջնալնին հեղեղի մը պես: Հինգենպուրկի հաղթությունը²⁷, որ ռուսաց բոլոր հառաջխաղացումը չնչեց Արևելյան Բրուսիայեն²⁸: Եվ հետո «Կյոպենհին» և «Պրեսլավին» մուտքը ի Պոլիս, Ֆրանքո-անգլիական ապիկար նավատորմին առջևն անցնող «Կյոպենհին»: Այս մուտքին <շահագործումը> անգլիացվոց կողմն, «Սուլթան, Ռեշատ» և «Կազի Օսման» տրետնեթներու գրավումը²⁹ և այդ գրավման տրված բիրա ձևը: Բացի ռուս դեսպանեն, որ իրոք դիվանագետ մըն է, Ֆրանսական և անգլիական դեսպաններուն ապիկար և ողորմելի մարդիկ ըլլալը

և, վերջապես, գերման բորբակախտին ունեցած հաջողությունները շատ ճարտարությամբ շահագործվեցան և օսմ. մամուլին մեծ մասը, իբրև թե ծալրահեղ հայրենասեր մը, իր տրամադրության տակ <ունեցավ>: Ճ. <ավիտ> պնդի կարծիքով, թե որ Անգլիա երկու տրեսնոթները վար դրած պահուն շատոնց փոխարժեքը, վրան երկու-երեք միլիոն ոսկի ավելցնելով իբրև վնասուց հատուցում, բարեկամական, մտերմական ձևով մը Թուրքիո վճարեր իսկույն, չի պիտի թողուր այն հոռի տպավորությունը, որ հիմա թողած է: Անգլիա այսպես վարվելով, թուրքերը չի պիտի կոռսնցներ: Լորտ Կրեյ⁸⁰ արհամարհական և բիրտ վարմունք ունեցավ: Հոս ալ հնարալի չի կար: Գերմանները շահագործեցին այս դեպքը և ինչ որ ավելին է՝ «Կյոպենհեյն» մուտքը և ստացած դիրքը այս պատճառեն ծագում առավ: Մկզբնավորությունը հիմակվան պատերազմին այս պզտիկ պատճառներով զատվեցավ:

Երկրորդ գլխավոր պատճառը սա մյուս համոզման, շատ տարածված և իբրև անհերքելի ճշմարտություն մը ներկայացված (ըստ իս, բոլորովին սխալ է), թե որ, երբոր Երրյակ Համաձայնության⁸¹ ընդ այս Ռուսիա եթե հաջող ըլլա, Թուրքիո վախճանը հասած է: Ի՞նչ հիմարություն: Ես լավ գիտեմ, որ Ռուսիան չէր ուղեր երբեք, որ էտիրենեն պուկարաց ձեռքը անցնի⁸², իսկ Պոլսո առումին բոլորովին հակառակ էր: Ես Փարիզի մեջ վերահաս եղա ասոր, ինչ որ վերջին ալ հաստատվեցավ: Բայց ո՞րի կ'ըսես:

Ինչպես ասկից առաջ, այժմ ևս Անգլիո և Ֆրանսայի շահը եր պահանջե Թուրքիո գոյության պահպանումը և Պոլսո՝ մեր ձեռքը մնալը: Այս բացարձակ ճշմարտության հակառակ՝ ամեն ոք ուսական հաղթության պարագային մեր բնաջինջ ըլլվելին իբրև ստուգություն նկատվելու միամտությունը ունեցաւ<վ>: Ասկից ծագեցավ մեր մեջ փափաքը Գերմանիան հաղթական տեսնելու՝ իբրև միակ միջոցը մեր փրկության:

Այս հիմերուն վրա դեպքերը developper⁸³ եղան, և հասանք այսօրվան կացության: Ես համոզված եմ, որ ուսերուն՝ Պոսֆորի նեղուցին բերանը եկած և ականներ զետեղելու զբաղած ըլլալը բոլորովին շինծու է: Ու արդեն պարադաներն ալ ցույց կուտան անոր սուտ ըլլալը: Կարելի չէ, որ Սև ծովի բերանը pose roptille-ն⁸⁴ ընկղմեցնեն և մեկ-երկու ժամ վերջը Օտեսան, նովորոսիսքը ռմբակոծեն⁸⁵: Ճշմարտությունը ան է, որ մենք «Կյոպենհեյն» Մյուշտի հրամանատարության տակ (սուտ է ան խոսքը, որ գերման ծովակալը Պոլիս էր) գնաք և անդարմանելի բան ըրած ըլլալու համար ծանոթ հարձակումը գործեց: Ես ջանացի, որ մենք իրողությունը ճշդենք և ըստ այնմ ռարձյալ խուսափենք պատերազմեն: Ընկերներս, որ մինչև դայն վայր ինծի համամիտ կը թվեին, կատարված իրողության առջև դեպի խաղաղություն վերադառնալ շուգեցին: Ինծի ալ ուրիշ բան չէր մնար, եթե ոչ հրաժարիլ: Ինչ ող ըրի:

Հետո զուգակշիռը ըրավ. շատեր ալ մեկնեցին, Թուրքիո մեկ կամ մյուս կողմը հակելուն համեմատ, անոնց մեկին կամ մյուսին հաղթող ելլելուն և կամ երկուքն ալ ուժասպառ ըլլալով, հաշտություն կնքելուն համեմատ, Թուրքիո շահերը և վնասը:

Ահավասիկ այդ զուգակշիռը:

1. Երրյակ Համաձայնության պատկանող պետությունները մեր հողային ամբողջությունն երաշխավորելու խոսք տված էին մեօի՝ եթե չեզոք մնային (իրավ է, որ ես թելադրեցի ասիկա իրենց): Մինչդեռ, Գերմանիա, թե որ հարթող ելնե, ապահովապես որոշ ժամանակի մը մեջ Իսկենդերունի նավահանգիստը⁸⁶ իբրև ծովային օգտագործելու պիտի ելլե, ինչ որ սկիզբը պիտի ըլլա Ատանայի վերացումին և անոր Հինտերլանտեն⁸⁷ զրավմանը: Ընդհ. առմամբ ալ Գերմանիո protectorat-ին⁸⁸ պիտի ենթարկվի:

2. Երրյակ Համաձայնությունը հոժարեցավ ընդունել քաբողջութեամբ անհրաժեշտներս ջնջումը⁸⁹ տնտեսական և ֆինանսական գործող մասին: Դատական խնդիրներուն մեջ ալ, քաղաքական և առևտրական խնդրոց մեջ: Միայն պատժ. <ական> դատերուն մասին անոնց պահանջումը թողեց և ապոր դյուրություններ տալու հակամետ էր: Գերմանիա մինչև վերջ ընդդիմություն

ցույց ավազ: Բոսթաններու փակման մասին (հիմակուհիմա) բառով վերապահում դրավ: Ընդդիմությունը մինչև հոն տարավ, որ պահ մը իբրև սպառնալիք ըսավ ինծի:

— Զէ նե՛՛ ես ալ գերմ. զինվորական մարմինն⁴⁰ ետ խրկել կուտամ:

— Շնորհակալ կ'ըլլամ,— ըսի իրեն:

3. Թե որ պատերազմի չի մասնակցեինք, տնտեսապես հիանալի կացություն մը պիտի ունենայինք, մենք պիտի հարստանայինք: Հիմա, Գերմանիո հետ քաղաքացիական պատերազմի և ավելի ևս պիտի փճանանք:

4. Եվ եթե Երրորդ պետությանց համակիր շեղություն մը պահենք, անոնք Կղզիներու խնդրուն⁴¹ մեջ ալ մեզի բավական հարմար կարգադրություն մը կրնային տալ:

Եթե շեղությունը խզելով իսկապես Երրորդ Համաձայնության հարեինք, կարող էինք ծովեն 4—500.000 հոգի Մարսել խրկել և անկե՛ պատերազմի դաշտը: Ան ատեն Երրորդ Համաձայնության հաղթությունը անվիճելի պիտի ըլլար: Իսկ հիմա, Գերմանիո հարելով, անոր մեծ օգուտ մը չի պիտի կրնանք ընծայել:

Ես ըսի, որ Թուրքիո հավանական tactigue պիտի ըլլա՝ 1. Պեսարապիո կողմը débarquement⁴² մը փորձել 1—200.000 զորք հանելով ցամաք: 2. Սուեզի canal-ը ավրել:

Ճ. <ավիտ> պել ալ այս կարծիքի է:

Այս բոլորին եզրակացությունը սա եղավ. երբ խրիմի պատերազմին⁴³ օսմ. դիվանագետները հաջողոր էին Ֆրանսական, անգլիական և իտալական ուժերը օսմ. շահերուն և պատերազմին և Թուրքիո գոյությանը ծառայեցնել, հիմա ասոր հակառակը կ'ըլլա. Գերմանիա Թուրքիո ուժերը գերման շահերուն կը ծառայեցնե՛ Թուրքիո գոյությունը վտանգի ենթարկելով:

Երկու խոսք ալ էտիրենի վերադրավման առթիվ Թուրքիո և իթթիհատի որոշ մեկ շրջանակին մեջ կազմված հոգեբանության մասին:

Ես ըսի, որ, ինչպես ամեն առթիվ ըսած էի մտերմական շրջաններու մեջ, այս վերադրավմամբ աղետալի պիտի ըլլա Թուրքիո՝ անոր մեջ մտցնելով տեսակ մը մեծամտություն և անհաշիվ հանդգնություն: Ահա ճիշդ ասոր, այդ մտայնության ապացույցները այսօր կը տեսնենք համաթուրքային և համիսլամական կայսրություններու կազմելու տղայական գաղափարին ծավալումը տեսնելով: Անոնք կ'ըսեն. էտիրենի մեջ հաջողեցանք, երբ Եվրոպան կ'ընդդիմանար 'և կ'սպառնար: Հիմա ալ պիտի հաջողենք: Այս անգամ ըրածնիս հանցադործություն էր: Հիմակվան ալ:

Ճավիտ պել պատասխանեց.

— էտիրենի խնդիրը հիմնական պատերազմին մեջ նետվելուն հետ բաղդատության չի կրնար կրվիլ: Պարագաները բոլորովին տարբեր են, ան ատեն Ֆրանսան զգացուցեր <էր>, որ ինքը ատոր համար պատերազմ չի պիտի ըներ մեզի դեմ: Անգլիան քիչ մը առաջ գացած էր, բայց ան ալ խոսքեն անդին չի պիտի անցներ: Ռուսիան նույնպես էտիրենին մեր ձեռքը մնալու փափաքը ունեւ: Ավստրիան էր, որ մղեց պուլկարները մինչև Պուսո դուռները: Հետո, ձախողանքի պարագային, շատ ջատ՝ էտիրեն մեզի դուրս կը հանեին և նորեն պզտիկ գոհացում կուտային՝ զմեզ լռեցնելու համար Միտիանա գծին վրա⁴⁴: Իսկ ներկա պարագային մեջ մեր գոյությունը <հեռ> կը խաղա:

<Դ. >

3/16 նոյեմբեր, 1914, Երկուշաբթի

Շաբաթ օր մեծ կատակերգությունը ներկայացվեցավ. Թուրքերը հանդիսավոր կերպով Ճիհատը էքսպեր⁴⁵ հրատարակեցին շորս պատերազմիկ տեղությունաց դեմ՝ Ռուսիա, Ֆրանսա, Անգլիա և Սերպիա: Այս խեղկատակության վրա Թուրքերն առաջինն են ծիծաղող: Կիրակի գիշեր Թուրք երեւելիներու հա-

վաքույթի մը մեջ չորս ֆեթվաները⁴⁶ բավական զվարճության նյութ եղաւ<ն> : 20-րդ դարուն մեջ սուրբ պատերազմի հրամանը սկեպտիկ վերաբերումէ ուրիշ ընդունելութիւն չի գտներ նույնիսկ թուրք ազգին մեջ: Բարձր դասին մեջ, վասնզի անիկա բավական զարգացած է և այս կերպ կառավարական իւզերեն ատենեն վեր է. ժողովրդալին դասերուն մեջ, վասնզի անիկա իր անձնապաշտութեան բնազդովը և 300 տարվան փորձառութեամբ մը գիտե ատոր կորստաբեր վախճանը:

Պոստ հասարակութիւնը իմ կարծիքովս, չի մասնակցեցաւ արդեն այս ցույցին: Իթթիհատը կազմակերպեց զայն և իր արբանյակները աւապս են իր (3 մ. անձնանուն) պես և իսլամ առևտրականներու՝ Ռումելիեն եկած տարբեր մարմիններ⁴⁷. միևնույն մարդիկ, ընդամենը 100 են 200 հոգի՝ զանազան պիտակներով բազմապատկւած, որոնց վրա կ'ավելանա ստորին դատարկապորտներու բազմութիւն մը: Բուն քաղբին բնակչութիւնը, որ հրավիրված էր սակայն կառավարութեան կողմէ տրված հրահանգներով մասնակցելու այս ցույցին, իր տանը մեջ մնաց:

Երկու մեծագործութիւններ շաբաթ օրվան ցույցին տվին իր իսկական հանգամանքը. առաջինը՝ Կալաթասարա<ի> մեջ կանգնված ռուս հուշարձանին⁴⁸ քանդումը, երկրորդը՝ կարգ մը թշնամի տերութեանց պատկանող առևտրական հաստատութեանց դեմ հարձակումը, որոնք Թոքաթլյան հաստատութեան⁴⁹ ավերումովը վերջացան: Ոստիկանութիւնը իր ավանդական դերին մեջն էր՝ այս անգամ ալ դյուրացնելով ավերողներուն գործը: Խեղճ Թոքաթլյան, որքան անձնվիրութեամբ էր ծառայած 5 տարիս ի վեր բոլոր իթթիհատի մեծերուն և պզտիկներուն, միմիայն այսօրվան կոտորածին փրկվելու երաշխավորութիւնն ստանալու համար, Թալաթեն, էնվերեն⁵⁰ սկսելով, մինչև է՛ն հետին իթթիհատականները իր սիրալիր *préséance*ներովը⁵¹ շրջապատված էին ամեն ժամ: Բերայի եկող-զացող բոլոր կառավարիչները, ոստիկանապետները իր ամենեն ավելի մեծարված հյուրերն էին: Իզո՛ւր այս ամենը: Անոնց հրամանովը և գործակցութեամբ իր հաստատութիւնը փլավ: Սպասենք վերջին:

Իմ կարծիքովս, Թոքաթլյան երկու կերպով արժանացաւ այս բախտին. մին՝ իբրև ռուս հպատակ, որ Թուրքիո հպատակութենէն հրաժարած՝ ըլլալու ծանրացուցիչ պարագան ունէր: Մյուսը՝ իբրև հայ տնտեսական տույժ մը, զոր փճացնելը թուրք տնտեսական նոր քաղաքականութեան իրավունքն է:

< b >

3/16 Նոյեմբեր, 1914, Երկուշաբթի, ցերեկէն ետքը

Այսօր Ակնունին⁵² ինծի եկավ: Ես տխուր էի: Անիկա ալ—իմացա խաժակեն⁵³—որ ընկճված էր քիչ մը: Լուր խրկեցի: Մեր բարենորոգումներու խընդրույն < վերջի > մասին համար իմ և մեկ քանի դաշնակցականներու մեջ անհամաձայնութիւնն կար⁵⁴: Ես կժու կերպով անոնց անքաղաքագետ և անհասկացող ընթացքը կը քննադատեի ամեն առթիւ: Վիրավորված էին ինծի դեմ: Ատոմին⁵⁵ կործանիչ և շարանախանձ դավադրութիւններն ալ զգացած զայրույթիս մեկ մասը դաշնակցականներուն վրա թափած էի: Անկե էր տխրութիւնը:

Ակնունին եկավ: Իրոք մտահոգ ու պարտասուն տեսա զինքը: Ո՛ւր էր լավատես ու զվարթախոհ մարդը: Դերերը փոխված էին: Ես զինքը հուսադրեցի և քաջալերեցի, առավոտ ցուցուցի պայծառ ու մերձավոր, այնպես որ ես կը նշմարեմ, արդեն կը տեսնեմ: Անդրադարձանք կատակով Ասիական Թուրքիո այն քարտեսին, զոր ես ասկե 2—3 տարի առաջ նախատեսած ու գծած էի, քարտես՝ այնքան մոտ, ըստ իս, իրագործվելու: Ես վստահ < եմ > ուստաց հաղթութեանը Կովկասի մեջ, ան՝ ոչ այնքան վստահ: Անիկա երկուստեք վտխադարձ հաջողութեանց ու ձախողվածքի շարք մը կը նախատեսի:

Ես անվերապ հառաջացումը ռուսաց կը գուշակեմ: Այո՛, անվերապ, քանի որ հայերը ռուսաց մեջ են:

Հետո խոսք կուգա Հոֆի⁶⁶ վերադարձին, Թալաթի անվերջ խաբեբայութեանց, որոնց մեջ ան ահա պիտի կորուսի՝ այս անգամ վերջնապես:

Անիկա իր Պոլիս բերվելուն պատմութիւնը կ'ընեն գինվորական հսկողութեան տակ: Այս եղանակով վախճանը իր հավատքին իթթիհատին վրա և իր անվեհեր պաշտպանութեան վարձատրութիւնը այդ անպաշտպանելի բախտախնդիրներուն:

— Դուն ալ, ըսի, քու արդար պատիժդ կրեցիր, ինչպես կրեցին Ֆրանսան, Ռուսիան, Անգլիան: Անոնք ալ հալածեցին բոլոր անոնք, որ իթթիհատեն դուրս ազատականներ էին և որոնք կ'ուզեին փրկել Թուրքիան: Դուն և այդ երկրի գործիչները անխնա հալածեցիք զանոնք ես ու պատժվեցաք: Երբոր Շեքեթ փաշան⁶⁷ Ֆրանսայի խորհուրդ կուտար իր դրամները փոխ չի տալու Թուրքիոյ, Ֆրանսան մտիկ չըրավ անոր:

Հետո խոսակցութիւնը եկավ սա նյութին վրա, որ Ֆրանսա և Անգլիա 30 տարի եւ վերջոյ մարտի տղիվանագետ մը շարկեցին Պոլիս իբրև դեսպան: Վերջին ժամուն մարդիկը⁶⁸ հայտնապես ապիկարներ էին՝ անկարող ճանշնալուծութիւն տարրը և անկարող մաքառելու գերման ազդեցութեան դեմ: Պ. տը Կիրս⁶⁹ միայն վերջին ժամանակները քիչ մը աշխատեցաւ, պ. Զարիբեֆ երազատես մը մնաց և իր դիրքը կորսնցնելու չափ խաբվեցաւ իթթիհատականներէն⁶⁹:

Ասոնց վերջին աններելի հանցանքը եղավ թուրքական mobilation-ին սկիզբը շարգիլել զայն՝ ի հարկեն պատերազմի սպառնալիքով: Այդ միջոցին Ռուսիա կարող էր 100.000 հոգիով մինչև Մերսին⁶¹ իջնել և Անգլիա՝ Տարտանելը քանդ ընելով, Պոլիս մտնել և իր բուլնին մեջ դարնել գերման-թուրք դավադրութիւնը: Բայց decision-ի⁶² մարդ չի կար ո՛չ Բեթեոպուրկ, ո՛չ Լոնտոն. ատոնք լավ ծանոթ ալ չէին կացութեան, միշտ խաբվեցան թուրքերուն չեզոքութեան հայտարարութենէն. երբոր այստեղ հետին մարդը գիտեր, որ անխուսափելիորեն պիտի նետվեո պատերազմի մեջ ու Գերմանիոյ կողմը:

Վերադարձանք մեր սիրելի գործին, մեր բարենորոգումներուն:

Անեքթոտ պատմելու մեջ անհասանելի է Ակնունի:

— Հոֆը հանդիպեցաւ, ըսավ, Թալաթի մոտ: Այդ միջոցին Հոֆի գովեստը ըրավ մեծավ ճարտարութեամբ, և խոսողին մոտեցաւ: Վարդգեսը հոն էր և խիստ սիրուն սրամտութիւն մը ըրավ, Հոֆի մոտեք ողջունեց:

— Vous avez teformé l'Arménie, ինչալլա՞հ, vous êtes rentré⁶³:

«Հոֆը քիթը կախ դարձեր էր Հայաստանէն՝ շատ բան չի հասկնալով իր շուրջնէ: Բայց երկու բանի վերահաս էր վերջապես: Առաջին՝ թե Հայաստան իրոք բարենորոգմանց կը կարողանար, և երկրորդը՝ թե թուրքերը իրոք բարենորոգում մտցնել չեն ուզեր ալդտեղ: Այս երկու ճշմարտութիւնները շալկած կը դառնա Եվրոպա», ըսավ Ակնունին:

<ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ>

<Ա>

Դեկ... <9/22, 1913>, երկուշաբթի

Առաու կանուխ խալիլ պեյին գացի մերժողական պատասխան տվի⁶⁴:

Ջարմացավ և ցավեցավ: Ինքը իր մասին անհուն դժվարութիւններու առջև <կը գտնվի> իր կուսակցութեան, (1 ա.) և առհասարակ թուրքերուն առջև:

<Բ>

Երեքշաբթի օրվան նիստը⁶⁵ <Դեկտ. 10/23, 1913>

<Փոխադարձ> կռիվ Շահրիկյանի հետ⁶⁶։ Իսկապես խայտառակ, մաղ-
ձոս արարած է ան։
Դավադրությունը⁶⁷։

<Գ>

<Դեկտ. 24/6 Հունվար, 1914, երեքշաբթի>

Գարայան⁶⁸ և Փափազյան⁶⁹։
Գիր մը կը խնդրեն⁷⁰։ Կը գրեմ, բայց raverie-ի⁷¹ մեջ։

<Դ>

Հինգշաբթի առաւոյթ⁷² <Դեկտ. 26/8 Հունվար>

Պատրիարքին փոխանորդը⁷³ և Գարայան հանուն Ապստոլության հանձ-
նախմբին ցավներին, զայրույթներին, թախանձ...

<Ե>

<Դեկտ. 26/8 Հունվար, 1914, հինգշաբթի>

Ապստոլության հանձնախումբը պատվիրակություն մը կը խրկե⁷⁴ իմ
մոտս։

Փափազյան և Գարայան։ Տեղի կուտամ և կրկին նիստի կ'երթամ⁷⁵։

Արդեն Հայկ. դատը մեծ կորուստ մը կրած է։ Առիթը փախցուցած ենք։
Ասկե վերջը կը մնա կորուստին չափը constater⁷⁶ ընել։

<Զ>

<Դեկտ. 26/8 Հունվար, 1914, հինգշաբթի>

Հինգշաբթի գիշերն նիստ Բերա, խորհրդարանը։

Իմ կարծիքս թե առաջարկությունը Դուռնեն չէ⁷⁷. որոշումը։ Տուն կու-
ղանք Գարայան, Վահան, ես, Փաստրմաճյան⁷⁸ ալ։ Կը խմբագրեմ, և կը տա-
նինք հետ հետևյալ առտուն։ Բերանացի հայտարարում⁷⁹։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կ. Պոլսի ժամանակով ժամը 14-ին։
2. Բեռլինի «Նացիոնալ ցայտունդ» լրագրին առընթեր ժամուկի հեռագրական գործակալու-
թյուն, որ հիմեն է ըրապրող Բ. Վոլֆը 1849-ին։
3. 1914-ի հոկտեմբերի 17/30-ին թուրքական երկու ակաճակիրներ մտել էին Օդեսայի
ծովախոյզը և խորտակել ռուսական «Դոնեց» հրետանավը։ Այդ արարքը արդարացնելու հա-
մար թուրքական հրամանատարությունը ստահող լուրեր էր տարածել, թե ռուսական նավերը
ականապատել էին Բոսֆորի նեղուցը։
4. 1914-ի հոկտեմբերի 20 (նոյեմբերի 2)-ին Ռուսաստանը պատերազմ էր հայտարարել
Թուրքիային։
5. Պաշտոններից հրաժարվել էին հանրագուտ շինությանց նախարար Մահմուդ փաշա
Զյուրբյուլուն, առևտրի նախարար Սուլեյման էլ Բուսթանին և թղթատարության նախարար
Ոսկան Մարտիկյանը։

6. Զավիդ Մեհմեդ րեյլ (1867—1926) 1909—11 և 1913—17 թթ. Թուրքիայի ելմտական նախարարն էր և լի համարձակվել հրաժարական տալ:
7. 1913—17 թթ. Թուրքիայի սատրապման (վարչապետ) ու արտաքին գործոց նախարարը Մեհմեդ Սալիդ Հալիմ փաշան (1863—1922) էր:
8. Կտրուկ շրջադարձ, հայացքների շեշտակի փոփոխություն:
9. Սալիդ Փյուլուկ Մեհմեդ Շապուր Զելեքի փաշան (1838—1914) Թուրքիայի վարչապետ էր եղել Արդուլ Համիդի ժամանակներից, 1908-ից հետո դարձել էր ժեռակույտի նախագահ, իսկ 1911—12-ին՝ դարձյալ վարչապետ:
10. Իբրահիմ Հազգի (Հազգը) փաշան Թուրքիայի վարչապետ էր 1910-ի հունվարից մինչև 1911-ի սեպտեմբեր:
11. Փաշալերել, խրախուսել:
12. Հալաճյան Պետրոս (1871— ?), իթթիհատական, Թուրքիայի հանրօգուտ շինութ-յանց և առևտրի երբեմնի նախարար, օսմանյան խորհրդարանի երեսփոխան:
13. Վարդգես (Հովհաննես) Սերինկյուլյան (1871—1915), դաշնակցական գործիչ, օսմանյան խորհրդարանի երեսփոխան:
14. Հավանականություն:
15. Կատարված փաստ:
16. Թալաթ (Թալեաթ) Մեհմեդ (1879—1921), իթթիհատի պարագլուխներից, ներքին գործոց, փոստի ու հեռագրության նախարար, 1917—18-ին՝ վարչապետ:
17. «Ամեն ինչ կամ ոչինչ»:
18. Այրված:
19. Ֆրանսիացի պետական գործիչ Լուի Ազուֆ Թիեռը 1870—71 թթ. ֆրանս-պրուսական պատերազմում Ֆրանսիայի կրած խայտառակ պարտությունից հետո կնքել էր նվաստացուցիչ հաշտություն:
20. Կենսաթոշակով:
21. Խոսքը «Իթթիհատ վե թերաթի» («Միություն և առաջադիմություն») քաղաքական կազմակերպության մասին է:
22. «Գյուրենը» և «Բերսալաուն» գերմանական հաժանավեր էին, որոնք 1914-ի հուլիսի 28 (օգոստոսի 10)-ին, խույս տալով անգլիական նավատորմից, մտել էին Դադղանելի նեղուցը, իսկ հաջորդ օրը Թուրքիան հայտարարել էր, թե իբր գնել է դրանք:
23. Գերմանացի ծովակալ Վիլհելմ Սուլոնը (1864—1946) Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան ռազմածովային ուժերի հրամանատարն էր:
24. Ակնարկված է 1870—71 թթ. ֆրանս-պրուսական պատերազմը:
25. Բեկդիական այս քաղաքները գերմանացիները գրավել էին պատերազմի սկզբում, օգոստոսի կեսերին:
26. Օգոստոսի 23—25-ին բեկդիական Մոնս քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում գերմանական զորքերը պարտության էին մատնել անգլիացիներին:
27. Պաուլ ֆոն Հինդենբուրգ (1847—1934), գերմանացի զորապետ, գնեթալ-ֆելդմարշալ:
28. Օգոստոսի 4 (17-ից մինչև սեպտեմբերի 2) 15-ը ռուսական զորքերը Արևելյան Պրուսիայում հասել էին մեծ հաջողությունների, որոնց շնորհիվ դաշնակիցները ջահել էին Մառնի (գետ Ֆրանսիայում) ճակատամարտը (սեպտեմբերի 5—12):
29. Այս զրահապատ հաժանավերը Թուրքիան յոթ միլիոն ֆունտ ստեռլինգով պատվիրել էր բրիտանական մի ֆիրմայի, իսկ 1914-ի հուլիսին անգլիական կառավարությունը արգելք դրեց դրանց վրա և մտրեց իր նավտորմի մեջ:
30. Էդուարդ Ֆալադոն Գրեյ (1862—1933), Անգլիայի արտաքին գործոց նախարար:
31. Նույն համաձայնությունը առավել հայտնի է Անտանտ անվամբ (Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ռազմական խմբակցությունը՝ ստեղծված 1904—07 թթ.):
32. Առաջին բալկանյան պատերազմի ժամանակ, 1913-ի մարտին, թուրքերը Բուլղարիային էին հանձնել Էդիրեն (Ադրիանուպոլիս) քաղաքը, սակայն Երկրորդ բալկանյան պատերազմում, խախտելով Լոնդոնի հաշտության պայմանագիրը (1913, մայիսի 30), հուլիսի 13-ին վերագրվել էին այն:
33. Զարգանալ (սկսեցին):
34. Ականաղիք նավ:
35. Թուրքական երկու ականաղիք ռազմանավ հոկտեմբերի 17/30-ին ուժրակոծել էին հիշյալ քաղաքները:

36. Իսկևզդեռոնը կամ Ալեքսանդրեյը ղտնվում է Թուրքիայի հարավում, էգեյան ծովի ափին:

37. Թիկունքի Լրկիր:

38. Հովանավորություն:

39. Սուլթան Մուրադ V-ի հրամանով Թուրքիան հոկտեմբերի 1/14-ից շեղյալ էր հայտարարել օտար Լրկրների հետ կնքված կապիտուլյացիոն պայմանագրերը՝ վերացնելով դրանցից բխող բոլոր տեսակի տնտեսական, ֆինանսական, վարչական և այլ արտոնությունները:

40. 1913-ի դեկտեմբերի 1/14-ին Կ. Պոլիս էր ժամանել ղերմանական ղինվորական մի մարմին՝ Թուրքական բանակում հինգ տարով բարձր պաշտոններ ղրաղեցնելու համար:

41. Առաջին բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո նրանից յ/րցրել էին Հունական արշիպելաղի կղզիներից մի քանիսը:

42. Ափհանում, ղեսանտ:

43. 1853—56 թթ. Ղրիմի պատերազմում Ռուսաստանը, կովելով Անգլիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի ու Սարդինիայի ղեմ, ծանր պարտություն էր կրել:

44. Առաջին Բալկանյան պատերազմում Թուրքիան կորցրել էր իր եվրոպական տիրույթները, բացառությամբ Կ. Պոլսի և Արենելյան Թրակիայի մի մասի, մինչև էնոս (էղիրենի նահանգ)՝ Միղիա (նավահանգիստ ներկայիս Ռումինիայում) գիծը:

45. Մեծ ջիհադ—Սրղաղան պատերազմ, որին, ըստ Ղուրանի, պարտավոր է մասնակցել մարտունակ ամեն մի մուսուլման:

46. Մուսուլմանների հոգևոր առաջնորդի (շեյխ ուլ-իսլամ) կողմից հարց ու պատասխանի միջոցով արտածվող հղրակացություններ կամ որոշումներ, որոնցով հիմնավորվում է պետական, քաղաքական կամ կրոնական կարևորություն ներկայացնող որևէ գործողության համապատասխանությունը Ղուրանին կամ շարիաթին (իսլամի կրոնաբարոյական և իրավական պատվիրանների համակարգը):

47. Խոսքը Բալկանյան պատերազմների հետևանքով Թուրքիայի եվրոպական տարածքներից՝ Ռումելից ղաղթած մահմեդականների մասին է:

48. Այս հուղարձանը կառուցվել է 1883—93 թթ. ի հիշատակ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմում ղոհված ռուս սպաների ու ղինվորների:

49. Այս մեծատունը Կ. Պոլսում պահում էր իր անվամբ կոչվող ղեստորանային հայտնի համալիր և մեծ վաճառատուն:

50. էնվեր փաղան (1881—1922) Թուրքիայի պատերազմական նախարարն էր:

51. Ներկայություն:

52. Ակնունի է. (Մալումյան Խաղատուր, 1863—1915), ղաղնակցական գործիչ, հրապարակագիր, լրագրող:

53. Խաժակ (Չաղալյան) Գարեղին (1867—1915), ղաղնակցական գործիչ, մանկավարժ, հրապարակագիր, լրագրող:

54. Այս մասին տե՛ս սույն հրապարակումների «Տարրերակներ» բաժնի <Բ> գրառումը՝ համապատասխան ծանոթագրություններով:

55. Ատոմ (Շահրեկյան Հարություն, 1860—1915), ղաղնակցական գործիչ, հրապարակագիր:

56. Նորվեղացի գնղապետ Նիկոլա Հոֆը բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումից հետո վանի, Բաղեղի, Խարբերղի և Տիգրանակերտի ընղհանուր քննչի պաղտոնով մեկնել էր Հայաստան, սակայն վերահաս պատերազմի պատճառով հետ էր կանչվել:

57. Շեղեթ Մահմուտ փաղա (1857—1913), Թուրքիայի պատերազմական նախարար, գեներալ, 1913-ի հունվարից՝ վարչապետ:

58. Նկատի ունի Կ. Պոլսում Ֆրանսիայի ու Անգլիայի ղեսպաններ Մ. Բոնպարին և Լ. Մելեթին:

59. Միխայիլ Նիկոլանիչ Գիրսը 1912-ի գարնանից Ռուսաստանի ղեսպանն էր Կ. Պոլսում:

60. Նիկոլայ Վալերիանովիչ Չարիկովը 1909-ից լինելով Կ. Պոլսում Ռուսաստանի ղեսպանը, սեծովյան նեղուցները ռուսական նավատորմի առաղ բացելու շուրղ բանակցություններ էր վարել Թուրքերի հետ, սակայն ձախողելով, 1913-ի մարտին հետ էր կանչվել:

61. Քաղաք Աղանայի նահանղում, Միլերկրական ծովի ափին:

62. Վճող, վճիռ կայացնող:

63. Մուր բարենորոգեղի Հայաստանը, ինղալլահ, և վերաղարձաք:

64. Դեկտեմբերի 7/20-ին իթլի-ատական կուսակցության աղդեցիկ ղեմքերից մեկը՝ Մեն-մեշե հալիլ բեյը (1874—1955), որ նոր էր նշանակվել Պետական խորհրդի նախագահ, այցելել է Զոհրապին՝ խնդրելու, որ հայերը հրաժարվեն բարենորոգումներն իրականացնելու նպատակով հվրոպական խորհրդականներ ունենալու պահանջից։ Մեն-ատական և մտերմական խոսակցության ժամանակ, Զոհրապի ջանքերով, հալիլը համաձայնել է եվրոպացի ընդհանուր քննիչներ նշանակելու առաջարկին։ Հաջորդ օրը, հայ գործիչների խորհրդակցությունում, հավանություն չի տրվել Զոհրապի բանակցություններին և նրան հանձնարարվել է բացասական պատասխան տալ հալիլին։

65. Խոսքը Ապահովության հանձնաժողովի (ստեղծվել է 1912-ի դեկտեմբերին, նպատակ ունենալով «թրթահայ քաղաքական դատի հետապնդումը») նիստի մասին է։ Զոհրապը այդ հանձնաժողովի անդամ էր։

66. 2. Շահիկյանը (Ասում) Ապահովության հանձնաժողովի անդամ էր և Զոհրապին մեղադրել է թուրքական կողմին դիշումներ անելու համար։

67. հալիլ բեյի հետ Զոհրապի վարած բանակցությունները որոշակի շրջանակներում առաջ են բերել ղեկավարություններ, արվել են նրան վարկարեկելու փորձեր։ Մասնավորաբար, Զոհրապին համարել են Հայ դատի ղեմ եղած «ղավադություն» նախաձեռնող, որ թերակուսական, միևնույն քան, երեսփոխան ղառնալու շահագրգռությամբ համաձայնել է Բ. Դուռն արած առաջարկներին։

68. Գարայան Ստեփան (1855—1933), օրենսգետ, Քաղաքական ժողովի ատենապետ։

69. Փափազյան Վահան (Կոմս, 1876—1973), դաշնակցական գործիչ, Ապահովության հանձնաժողովի անդամ-քարտուղար, օսմանյան խորհրդարանի երեսփոխան։

70. Բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի նախագծում թուրքական կողմը մտցրել էր ինչ-ինչ փոփոխություններ, որոնց առթիվ ռուսական ղեկավարները խենդրել էր հայերի գրավոր կարծիքը։

71. Երազ։

72. Գրառումը կիսատ է թողել։ Այս և հաջորդ տարբերակները վերաբերում են միևնույն խնդրին։

73. Պատրիարքական փոխանորդը Գարրիկը եպսկ. Ճեմա՛հիրճյանն էր։

74. Պատվիրակության այցի մասին վ. Փափազյանը նախապես նամակով տեղյակ էր պահել Զոհրապին (տե՛ս ԳԱԹ, ԶՅ, № 71 (5))։

75. Ապահովության հանձնաժողովի նիստին «ստիպողաբար» ներկա գտնվելու խնդրանքով դեկտեմբերի 26-ին Զոհրապին դիմել էր նաև Պատրիարքարանը (տե՛ս ԳԱԹ, ԶՅ, № 68 (1))։

76. Հաստատել։

77. Խոսքը բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի նախնական օրինակի մասին է։

78. Փաստորմաճյան Գարեգին (Արմեն Գարո, 1872—1923), դաշնակցական գործիչ, օսմանյան խորհրդարանի երեսփոխան։

79. Հայկական կողմը սկզբունքորեն հավանություն տալով ռուս-թուրքական համաձայնագրին, որոշ հարցերի շուրջ վերապահություններ է արել և որոշել դրանց մասին հայտնել ռուսական ղեկավարությունը։